

**Երևան քաղաքի Խանջյան 43 հասցեով կաթսայատանը արևային ջրատաքացուցիչներով տաք ջրամատակարարման համակարգի հավաքակցման և գործարկման նախագիծ**

**Նախապատմություն**

Արևային ջրատաքացուցիչների կիրառումը Հայաստանի համար ունի կարևոր նշանակություն ներկրվող վառելիքի ծախսի կրճատման և երկրի էներգետիկ անվտանգության բարձրացման տեսանկյունից:

Բազմաբնակարան բնակելի շենքերի տաք ջրամատակարարման համար արևային ջրատաքացուցիչ համակարգերի կիրառումը գոյություն ունեցող գազով աշխատող տաք ջրամատակարարման համակարգերի նկատմամբ դիտվում է որպես էներգիայի այլընտրանքային աղբյուր:

«Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագիրը Խանջյան 43 հասցեով կաթսայատանը ձեռնամուխ է եղել իրականացնել արևային ջրատաքացուցիչներով տաք ջրամատակարարման համակարգի ներդրման փորձնական ծրագիր նպատակ ունենալով տարածել բնապահպանական տեսակետից մաքուր և էներգաարդյունավետ այլընտրանքային տեխնոլոգիաներ:

2007 թ. ապրիլին Ծրագրի փորձագետների կողմից մշակվել են փորձնական ծրագրի մեջ ներգավելիք կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերի ընտրության չափորոշիչները: Հիմնվելով այդ չափորոշիչների վրա, հետագա ուսումնասիրությունների համար ընտրվել է ջերմամատակարարման երկու համակարգ, որոնցից մեկը «Սաուք Թերմ» ՍՊԸ կողմից շահագործվող ջերմամատակարարման համակարգն էր:

«Սաուք Թերմ» ՍՊԸ-ն շահագործում է Խանջյան 43 հասցեով կաթսայատունը և իրականացնում է Սայաթ-Նովա 29,31,33 և Խանջյան 43,45,47,47/1 բազմաբնակարան բնակելի շենքերի ջերմամատակարարումը (ընդհանուր առմամբ 123 բնակարան և 6 այլ նշանակության օբյեկտ): Վճարումների հավաքագրման մակարդակը գերազանցում է 95%-ը:

**Ծրագրի նպատակը:**

Ծրագրի նպատակն է Խանջյան 43 հասցեով կաթսայատանը ներդնել և գործարկել արևային ջրատաքացուցիչներով տաք ջրամատակարարման համակարգ (70 քմ. ընդհանուր մակերեսով):

**Ակնկալվող արդյունքները:**

Ծրագրի իրականացումից ակնկալվող հիմնական արդյունքներն են.

- Սայաթ Նովա 33 շենքի 77 բնակարանների (տնային տնտեսությունների) տաք ջրամատակարարում
- Ջերմամատակարարման համակարգում վերականգնվող էներգիայի կիրառման փորձնական ծրագրի իրականացում
- Բնական գազով աշխատող կաթսաների կիրառմամբ տաք ջրամատակարարման համեմատությամբ ջերմոցային գազերի արտանետումների կրճատում:

**Ծրագրի համառոտ նկարագրությունը:**

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Սայաթ Նովա 33 շենքի 77 բնակարանների տաք ջրամատակարարումն իրականացնել տաք ջրամատակարարման հիբրիդային համակարգի միջոցով. անհրաժեշտ ջերմային էներգիան կարտադրվի արևային ջրատաքացուցիչների և գազով աշխատող կաթսայի միջոցով:

Նշված համակարգի հավաքակցման և գործարկման ընդհանուր արժեքը կազմում է 46 000 ԱՄՆ դոլար:

Ծրագրի տնտեսական արդյունավետության ուսումնասիրություններից պարզվել է, որ արևային ջրատաքացուցիչներով տաք ջրամատակարարման համակարգի կիրառումը այլընտրանքային տարբերակների (գազով աշխատող կաթսայից տաք ջրամատակարարում, էլ. և գազային անհատական ջրատաքացուցիչների կիրառում) նկատմամբ տնտեսապես մրցունակ է միայն դրամաշնորհային համաֆինանսավորման դեպքում:

### **Ծրագրի իրագործման ընթացքը**

Նախկինում իրականացված հետազոտությունների և շահառուների հետ խորհրդատվությունների հիման վրա 2007 թվականի հունիսի 19-ին ՄԱԶԾ-ի, «Սառիք Թերմ»-ի և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ստորագրվել է համաձայնության հուշագիր, որը նախագծի իրականացման ընթացքում սահմանում է կողմերի պարտավորությունները և պատասխանատվության ոլորտը: Ըստ վերոհիշյալ հուշագրի կողմերից յուրաքանչյուրը պատասխանատու է հետևյալի համար.

### **ՄԱԶԾ.**

- Կազմել նախագծի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների, նյութերի անվանացուցակը և սահմանել ՄԱԶԾ կողմից գնման ենթակա սարքավորումների ցանկը
- Չեռք բերել արևային ջրատաքացուցիչների տեղադրման (հավաքակցում և գործարկում) և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ սարքավորումները
- Կատարել համակարգի տեխնիկատնտեսական հաշվարկները, ներառյալ տաք ջրամատակարարման ծառայության մատուցման սակագինը:
- Աջակցել Ընկերությանը ծրագրի իրականացման համար ֆինանսական այլ միջոցների հայթայթման գործում
- Աջակցել Ընկերությանը կազմակերպելու հանդիպումներ բնակիչների հետ, ներկայացնելով ծրագրի իրականացման գործընթացի մանրամասները
- Իրականացնել համակարգի շահագործման մոնիտորինգ
- Կատարել համապատասխան տեխնիկատնտեսական հաշվարկներ, վերլուծություն (մոնիտորինգի արդյունքների հիման վրա) և տալ առաջարկություններ տաք ջրամատակարարման ծառայության կայուն կազմակերպման համար:

### **«Սառիք Թերմ» ՓԲԸ.**

- Ստորագրել համաձայնագիր կենտրոնացված տաք ջրամատակարարում ստանալու ցանկություն հայտնող շահառուների հետ :
- Ապահովել Սայաթ Նովա 33 հասցեով կաթսայատան տանիքի վերակառուցման թույլտվության ստացումը և արևային ջրատաքացուցիչներով բազմաբնակարան բնակելի շենքի տաք ջրամատակարարման համակարգի նախագծային փաստաթղթերի մշակումը
- Վերակառուցել Սայաթ Նովա 33 կաթսայատան տանիքը, ինչպես նաև կառուցել բնակելի բազմաբնակարան շենքի տաք ջրամատակարարման բաշխիչ ու ներշենքային ցանցերը:
- Աջակցել ՄԱԶԾ կապալառուների կողմից կատարվելիք աշխատանքների իրականացմանը:
- Ապահովել անխափան տաք ջրամատակարարում և համակարգի գործունեության հուսալիությունը արևային ջրատաքացուցիչների ու գազով աշխատող կաթսանների համատեղ աշխատանքի պայմաններում:

### **ՀՀ բնապահպանության նախարարություն.**

- Ապահովել պիլոտային գործողությունների համապատասխանությունը ՄԱԶԾ/ԳԷՖ 00035799 ծրագրի նպատակներին:

- Ապահովել Համաձայնագրի հոդված 3-ով նախատեսված գործողությունների իրականացման մոնիտորինգը:

Համաձայնության հուշագրի համաձայն ՄԱԶԾ-ն կֆինանսավորի նախագծի արժեքի 75%-ը, ներառյալ արևային ջրատաքացուցիչների ձեռք բերումը և համակցումը նախագծի իրականացման վայրում, “Սաութ Թերմ” ՓԲԸ-ն՝ նախագծի արժեքի 25%՝ ներառյալ Սայաթ Նովա 33 կաթսայատան տանիքի վերակառուցումը և տաք ջրամատակարարման բաշխիչ ու ներշենքային ցանցերի կառուցումը:

“Սաութ Թերմ” ՓԲԸ-ն 2007թ. օգոստոսին սկսել է Համաձայնության հուշագրով իր պարտավորությունների իրականացումը, որն ավարտել է նույն թվականի սեպտեմբերի 15-ին:

2007թ. հոկտեմբերի 23-ին ՄԱԶԾ-ն մրցութային կարգով ընտրված կապալառու կազմակերպության հետ կնքել է պայմանագիր արևային ջրատաքացուցիչներով տաք ջրամատակարարման համակարգի հավաքակցման և գործարկման վերաբերյալ :

2007թ. նոյեմբերի 9-ի դրությամբ Կապալառուի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- արևային կոլլեկտորների հավաքակցում,
- սկումուլացիոն տարողության նախագծում, պատրաստում և փորձարկում,
- օժանդակ սարքավորումների ձեռք բերում: